

A. SALMASIAN. *Bibliographie de l'Arménie. Nouvelle édition entièrement revue et considérablement augmentée.* Erévan, Éditions de l'Académie des Sciences de la R. S. S. de l'Arménie, 1969. 471 pages. Prix: 2 r. 12 k.

Ա. ՍԱԼՄԱՍԻԱՆ. Հայկական մատենագիտություն: Ամբողջությամբ վերանայված և զգալիորեն ավելացված նոր հրատարակություն, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1969, 471 էջ, գինը՝ 2 ռ. 12 կոպ.:

Հայ մատենագիտության դանձարանում ավելացավ ևս մի հրատարակություն, որի գոյության կարիքը վաղուց էր ղգացվում: Դա՝ իրավաբանության գոյություն Ա. Սալմասլյանի «Հայաստանյան մատենագիտություն» է, որի առաջին տպագրությունը, փոքրագիր ծավալով, լույս էր տեսել Փարիզում 1946 թ., ակադ. Ռ. Գրոսսեի առաջաբանով¹. Իսկ երկրորդ տպագրությունը, որ այժմ մեր սեղանի վրա է, մեծագիր ծավալով, լույս է ընծայվել Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ և ակադ. Ա. Ղարիբյանի խմբագրությամբ: Հետագա էջերում նկատի ունենք վերջինս:

Այս աշխատության նպատակը եղել է, ինչպես հեղինակն ինքն է ասում «Ներածության» մեջ, «դնել օտար լեզուներով հայ մատենագիտության հիմքերը», «հետազոտողներին տալ հայագիտության բոլոր մյուղերը միայն օտար լեզուներով», ընդգրկելով «հայ և օտար գրողների գործերի ամբողջությունը» (12):

Այս ծրագրով՝ Սալմասլյանի աշխատությունն ունի, անշուշտ, իր նախորդները: Առանց հիշատակելու այն մատենագետներին, որոնք հայերեն հրատարակությունների հետ միասին տվել են նաև օտար լեզուներով հրատարակություններ, ասենք, որ հայագիտական ղուտ օտարալեզու մատենագիտություններ են կազմել Կ. Եզյանը², Ս. Պարոնյանը³, Կ. Կոստանյանցը⁴

և Պ. Ֆերհաթյանը⁵: Կարելի է այս հեղինակների շարքին դնել նաև Ի. Պրատտը⁷, թեև նա օտար լեզուների հետ միասին սկզբունքով ընդգրկել է նաև հայերեն հրատարակություններ՝ լատինական տառադարձությամբ:

Ընդգրկման առումով մասնակի կամ ամբողջական ծրագիր ունեցող այդ հրատարակություններից, սակայն, անցել է ավելի քան կես դար և այդ ընթացքում կուտակվել են հսկայական քանակությամբ նոր նյութեր, որոնք սպասում են հոգատար ձեռքերի կողմից հավաքման, դասավորման ու հրապարակման՝ մասնագետների ըստ պատկանելության համար, ի շահ հայագիտության: Սալմասլյանի հրատարակությունը նպատակ է դրել, անցյալում կատարված աշխատանքներն էլ որդեգրելու հետ միասին, լրացնել նաև այդ կեսդարյա բացը և մենք դնահատանքով ենք ողջունում նրա այս նախաձեռնությունը:

¹ Ս. Պարոնյան, *Bibliographia Armeniaca. Մատենախոսութիւն հայկական ըստ օտար լեզուաց, այն է՝ ցանկ ամենայն մատենի ու յօդուածոց որո ճառեն յօտար լեզուս ղհայոց և ղհայկականաց ի սկզբանէ անտի մինչև յիս 1900 ամին.* «Բանասէր», 1900, էջ 83—96 և 174—180:

² Կ. Կոստանյանց, *Հայագիտութիւնն Արեւմտեան Եւրոպայում. Համառօտ տեսութիւն և գրացուցակ.* Թիֆլիս, 1910:

³ Ս. Պ. Ֆերհաթյան, *Ցուցակ հայագիտական հրատարակութեանց յեւրոպա (1896—1910).* Վիեննա, 1919: (Արտատպւած՝ «Հանդէս Ամսօրեայի» 1911—1914 թթ. հատորներից):

⁴ Ida A. Pratt, *Armenia and the Armenians; a list of references in the New York Public Library, New York, 1919*

¹ A. Salmasian. Docteur en Droit, *Bibliographie de l'Arménie. Préface de René Grousset, de l'Académie Française.* Paris, 1946. 196 էջ.

² Այստեղ և այսուհետև փակագծերի մեջ ղրված թվանշանները գրախոսվող գրքի էջերն են ղուլյց տալիս:

³ Կ. Եզյան, *Եւրոպական լեզուներով ղրուած գրքեր և յօդուածներ տասը տարուայ ընթացքում (1876—1886).* «Հանդէս Գրականական և Պատմական», ղիրք Գ, 1890:

Ամենից առաջ ասենք, որ այս դիրքը ֆրանսերեն հրատարակություն է և հեղինակի կողմից խորագրվել է «Bibliographie de l'Arménie» այսինքն՝ «Հայաստանյան մատենագիտություն»։ Իսկ այս խորագիրն ամենևին էլ արտասովոր չէ, քանի որ նրա նպատակն է օտարներին ներկայացնել Հայաստանը, նրա սպասությունը, հին և նոր մշակույթը և այն ամենը, որ վերաբերում է այդ երկրի ժողովրդին։ Բայց զրբի օժանդակ՝ հայերեն անվանաթերթում հիշյալ խորագիրը սխալ թարգմանությամբ դարձել է՝ «Հայկական մատենագիտություն», մի խորագիր, որը հիշտկիներ միայն այն դեպքում, եթե զիրքն ընդգրկած լիներ նաև բոլոր հայալեզու հրատարակությունները, ինչպես են Գ. Զարբանալյանի և Ա. Ղազիկյանի մատենագիտությունները։

Սալմասլյանի մատենագիտությունն իր բնույթով հայագիտական է և ընդգրկած ծրագրով՝ ամբողջական։ Այս հանգամանքը նկատի ունենալով՝ խմբագիրը հատորի սկզբում զետեղված իր նախաբանում վեր է հանել այն նշանակությունը, որ մատենագիտական սույն և նման գործերն ունեն հայագիտության զարգացման գործում։ «Հայագիտական լրիվ մատենագիտությունն այն առաջին աղբյուրն է, որ կարող է թև տալ արդի և զալիք հայագետների մտքին, նոր առաջընթացի խթան դառնալ, քանի որ գիտական հարցի պատմության գիտությունը լավ գրավական է, որ հետադոտողը չկրկնի նախորդներին, ձգտի նոր խոսք ասել ու հարցի լուծումը մոտեցնել վախճանին» (5)։

Կասկած չկա, որ սույն աշխատությունը գիտական առումով արժանիքներ շատ ունի։ Եթե նրա սուղին հրատարակության առթիվ մենք գրել էինք, որ դա «գիտական օգտագործման համար համարելի է սակավ պիտանի»⁸, ապա այժմ, նրա երկրորդ հրատարակության համար, մեր կարծիքը տարբեր է։ Դեռ 1965 թ. սեպտեմբերին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնական դրադարանի գիտական խորհրդի այն նիստում, ուր այս աշխատությունը հրատարակելու հարցն էր քննվում, մենք մեր դրավոռ զեկուցման մեջ հայտնել էինք այն կարծիքը, թե այս դիրքն իր մակարդակով արդեն «կարող է զգալիորեն օգտակար լինել հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերով զբաղվողներին» և թե «այս աշխատության հրատարակումը մեծապես կնպաստի մեղանում հայագիտական աշխատանքների հետագա վերելքին»։ Բայց և

ավելացրել էինք, որ «որոշ վրիպումներ ու բացթողումներ, անշուշտ, նկատելի են աշխատության մեջ, բայց դրանք անխուսափելի են առհասարակ մատենագիտական բոլոր աշխատությունների համար, մանավանդ մի այնպիսի մեծածավալ աշխատության, ինչպիսին է Սալմասլյանի այս մատենագիտությունը»։

Այսօր, երբ արդեն սեղանի վրա է «Հայաստանյան մատենագիտության» տպագրված հատորը, մենք դարձյալ նույն կարծիքին ենք հայագիտության զարգացման համար այս մեծածավալ երկի ներկայացրած կարևոր նշանակության և արժեքի մասին։

Իրոք՝ Սալմասլյանի մատենագիտությունն ուղադրության արժանի և հայագիտության բնագավառի աշխատանքների համար կարևոր գործ է։ Հեղինակը, ըստ իր ծրագրի, ընդգրկում է հայագիտական օտարալեզու հրատարակություններ և, ինչպես տեսնում ենք, շատ արժեքավոր հրատարակություններ է նշում սկսած XVI—XVII դարերից մինչև մեր օրերը։ Ուղադրություն է գրավում հատկապես այն հանգամանքը, որ նա, առանձին հատորներով հրատարակված գրքերից, օգտագործել է նաև հայագիտական, արեւելագիտական և ընդհանրապես պատմա-բանասիրական պարբերական մամուլում լույս տեսած բազմաթիվ նյութեր։ Այս հանգամանքը «Հայաստանյան մատենագիտության» համար խոշոր առավելություն է։

Ընդգրկման ծավալով Սալմասլյանի այս աշխատությունն աննախընթաց է իր նախորդների մեջ։ Հատորում տեղ գտած գրքերն ու հոդվածները կազմում են մոտ 7000 միավոր։ Այդ ամբողջ նյութը տեղավորված է հետևյալ 22 բաժինների մեջ, որոնցից յուրաքանչյուրում նկարագրված գրքերը դասավորված են հեղինակային անունների այբբենական կարգով։ I. Géographie—Topographie (Աշխարհագրություն—Տեղագրություն). II. Géologie—Climatologie—Botanique (Երկրաբանություն—Կլիմայագիտություն—Բուսաբանություն). III. Anthrologie—Ethnographie—Démographie (Մարդաբանություն—Ազգագրություն—Ժողովրդագրություն). IV. Histoire (Պատմություն). V. Religion—Église—Théologie (Կրոն—Եկեղեցի—Աստվածաբանություն). VI. Juridique (Իրավագիտական). VII. Economique—Commercial (Տնտեսագիտական—Վաճառականական). VIII. Social—Culturel (Բնակրային—Մշակութային). IX. Déportations—Persecutions—Atrocités (Տարագրություններ—Հալածանքներ—Վայրագություններ). X. Diaspora Arménienne (Հայկական Սփյուռք). XI. Les Mékhitaristes

⁸ Հ. Դ. Անտոյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ XXIX.

(Միսիթարյանները). XII. Voyages — Etudes (Ուղևորություններ — Ուսումնասիրություններ). XIII. Literature — Folklore — Mythologie (Դրականություն — Ֆոլկլոր — Միթոլոգիա). XIV. Philologie — Linguistique (Բանասիրություն — Լեզվաբանություն). XV. Dictionnaires (Բառարաններ). XVI. Architecture — Archéologie (Ճարտարապետություն — Հնագիտություն). XVII. Numismatique — Sigillographie (Դրամագիտություն — Կնքագիտություն). XVIII. Arts: Miniature, Musique, Théâtre etc. (Արվեստներ՝ Մանրանկարչություն, Խրաժշտություն, Խատրոն և այլն). XIX. Manuscrits — Paléographie (Ձեռագրեր — Հնագրություն). XX. Généalogie — Biographie (Ազգարանություն — Կենսագրություն). XXI. Liste des périodiques (Ցուցակ պարբերականների). XXII. Bibliographie (Մատենագիտություն):

Այս բաժիններում ընդգրկված են հայագիտության զանազան բնագավառները, այնպես որ կարող են այնտեղ իրենց անհրաժեշտ նյութերը գտնել պատմաբանն ու հնագետը, լեզվաբանն ու գրականագետը, իրավաբանն ու տնտեսագետը, երկրաբանն ու աշխարհագիրը, ինչպես և երաժշտության, մանրանկարչության, ճարտարապետության և արվեստի ուրիշ ճյուղերի պատմությամբ զբաղվող գիտնականը և այլն:

Մի խոսքով՝ «Հայաստանյան մատենագիտությունը» կոչված է շատ օգտակար գերկատարելու հայագիտության այլևայլ բնագավառների աշխատանքներում: Նախ ընդհանրապես արտասահմանյան հայագետների համար դա կհանդիսանա մի օգտակար ուղեցույց. իսկ առանձնապես մեղ մոտ՝ Հայաստանում, մեր պատմական հայրենիքի ցանցում և գիտահետազոտական այլ հաստատություններում աշխատող գիտնականներին ներկայումս անգնահատելի ծառայություն կմատուցի այս աշխատությունը նրանով, որ այնտեղ նշված են ստվարաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնց գոյության մասին իսկ, դժբախտաբար, այլ միջոցներով տեղյակ լինելու հնարավորություն չէինք ունենել մինչև այսօր:

Հատորի հավելվածում տրված են չորս ցանկեր՝ 1. Այլևայլ համառոտագրություններ. 2. Օգտագործված պարբերականների համառոտագրություններ (մոտ 590 անուն). 3. Մածկանուններ (ավելի քան 70 անուն) և 4. Այբբենական ցանկ հեղինակների, թարգմանիչների և այլն (մոտ 4000 անուն):

Դիտության համար անգնահատելի նյութերով հարուստ այս հատորի արժանիքները վեճ են ամեն կասկածից: Սակայն հեղինակն ինքն իսկ հաշվի է առել, որ իր հատորում կլինեն «հնարավոր անկատարություններ» և «հավանա-

կան վրիպումներ», իսկ այս անխուսափելի իրողության համար արդարացիորեն վկայակոչել է Ալֆրեդ դը Մյուսեի խոսքերը, թե «մատենագիտական ձեռնարկները նակատագրորեն անկատար են» (14):

Լիովին համաձայն լինելով այս հարցում հեղինակի հետ, կցանկանայինք որոշ գիտողություններ անել այս ուղղությամբ, ցույց տալու համար այն քննական ուղին, որի միջոցով «Հայաստանյան մատենագիտությունը» կարող է իրոր օգտակար հոմք և հիմք դառնալ հայագիտական ապագա լիակատար մատենագիտության համար:

Դուխների և բաժինների հարցում՝ մեզ համար առանձին նշանակություն չունի այն խնդիրը, թե գիտականորեն ի՞նչ աստիճանի նպատակահարմար են այդ խմբավորումները. միայն կասեինք, որ բաժիններից յուրաքանչյուրում թեև ղեկավար է հիմնականում համապատասխան գրականություն, բայց այս կամ այն բաժնում պատահում են դրքեր, որոնք այդ բաժին չեն պատկանում: Օրինակ I զլխում, որ է՝ «Աշխարհագրություն—Տեղագրություն», նշված աշխատություններից Babelon E., «Actas de la Commission de l'Académie des Inscriptions» (18) և Meyer G. R., «Die Urartäische Festung Stadt des Tescheba» (25) հնագիտական երկեր են ու պետք է տեղափոխվեն XVI զլխի մեջ. կամ թե՛ Bent J. Th., «The two capitals of Armenia (Sis and Etchmiadzin)» (18) և Honigsmann E., «Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071, nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen» (21) պիտի լինեն պատմության բաժնում՝ զլ. IV:

Այս տեսակետից՝ IV զլուխը, որ է «Պատմություն», ավելի է խառն: Այս բաժինը, որ ամենից ընդարձակն է, պարունակում է պատմական հարուստ նյութ. բայց հայ ժողովրդի պատմությանը վերաբերող օտարալեզու ուսումնասիրությունները որքան էլ առատ լինեն, այնուամենայնիվ, մի շարք հրատարակությունների տեղից այս զլուխը չէր. օրինակ՝ Brosset M. F., «Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes» (61) և Mustafa Selçuk (ուղղել՝ Selçuk M.), «Urartu kılavuzu» (103) պիտի գնային հնագիտության բաժինը՝ զլ. XVI: Ահավել ուշագրավն այն է, որ պատմության բաժինը խճողված է հայկական և արևելյան հարցերին նվիրված մի շարք հրատարակություններով, որոնց յուրահատուկ տեղը IX զլուխն էր: Այս վերջինս, որ խորագրված է «Տարագրություններ—Հալածանքներ—Վայրագություններ», անգիմադրի և գիտականորեն որպես

քննադատող չարդարացող բաժին է, որը, ելնելով իր ընդհանուր բնութից, պետք է խորագրված լինե՝ «Հայկական հարց—Արեւելյան հարց», և հենց այստեղ է, որ պատմության բաժնից պետք է տեղափոխվեն Abbott L., „The Armenian question“ (49), Adontz N., „Towards the solution of the Armenian question“ (50), Aharonian A. et Nubar B., „La Question arménienne...“ (51), Aknouni E., „La Question arménienne...“ և „Le Criminel...“ (51), Ancel J., „Manuel historique de la Question d'Orient“ (52), Andreassian D., „Comment un drapeau sauva...“ (53), Arakélian H., „La Question arménienne...“ (53), Aramaïs, „Les massacres...“ (53), Armand E., „La Question arménienne“ (54), Bellegotti L. A., „Il concerto Europeo e la Questione armena“ (57), Benjamin S. G. W., „The Armentians and the Porte“ (57) և ուրիշներ: Իսկ, ընդհանրապես, այնպիսի գործեր, ինչպիսին են Levaillant de Florival E., „Exposée rapide des persécutions exercées contre les catholiques arméniens en Orient...“ (215) և անանուն „Fiore (Un) d'Armenia o una persecuzione del cattolismo nel 1860“ (222) և նմաններ պետք է տեղափոխված լինեին ոչ թե IX դիտում, այլ, որպես Հայաստանի կրոնական պատմությանը վերաբերող նյութեր, V դիտում: Նմանապես՝ Minas de Tokhat, „Die Verfolgung der Armenter in der Moldau vom Jahre 1551“ (216), որպես հայ գաղութների պատմությանը վերաբերող նյութ, պետք է զետեղվեր X դիտում, իսկ այս զննչը՝ զույգ ազգերի նպատակահարմար կլինե՝ խորագրել «Հայ գաղթականություններ և գաղութներ», որովհետև «Սփյուռքը» միայն ժամանակակից գաղութների իմաստ ունի, իսկ այստեղ գետեղված են նյութեր, որոնք վերաբերում են շատ ավելի հին ժամանակների:

Գիտարանությունը միացված է գրականության և ֆոլկլորի բաժնին՝ զլ. XIII, եթե այսպես է՝ ապա Wikander S., „Feuerpriester in Kleinasten und Iran. XIII. Die Göttin Anahita und der Feuerkultur“ (172) երկը պիտի այստեղ տեղափոխված լինե՝ և ոչ թե կրոնի և եկեղեցու բաժնում: Բայց ընդհանրապես գիտարանական հետադոտությունները, որոնք պատմա-բանասիրական գիտությունների բնագավառին են պատկանում, ինչպես են, օրինակ, Karst J., „Mythologie arméno-caucasienne et hetito-asianique“ (291) կամ Ananikian M. H., „Armenian Mythology“ (279), պետք է կադմին ուրույն բաժին:

XIII դիտման առհասարակ իրար տնհարիր նյութերի մի համատեղում է ներկայացնում ոչ միայն ֆոլկլորն ու գիտարանությունը իրար խառնելու չափ միացնելով գրականության հետ, այլև միջնադարյան մատենագրությունն ու մատենագրական ուսումնասիրությունները և դասական բանասիրությանը պատկանող երկերը խառնելով գեղարվեստական գրականության հետ: Այսպես՝ մի կողմից Leist A., „Literarische Skizzen“ (292), որը Պատկանյանի, Պեշիկթաշլյանի և Ալիշանի գրականությունն է ներկայացնում, կամ Macler F., „La littérature arménienne moderne“ (293), որը Բաֆֆու, Պարոնյանի, Մարի Սըվաճյանի գրականությունն է տալիս, կամ թե՛ Baronian H. H., „Maitre Balthasar“ (280), որ է հայտնի «Պաղտասար աղբար» կատակերգությունը, մյուս՝ կողմից գտնում ենք ծանրանխտ բանասիրական հրատարակություններ, ինչպես են՝ Bardenhewer O., „Geschichte der altkirchlichen Literatur“ (280), Baumgartner A., „Geschichte der Weltliteratur“ (281), Baumstark A., „Die christlichen Literaturen des Orients“ (281) Brockelmann K. և ընկերների „Geschichte der christlichen Literaturen des Orients“ (283), Harnack A., „Forschungen auf dem Gebiete der alten grusinischen und armenischen Literatur“ (289), նույնի „Die Überlieferung und der Bestand der altchristlichen Litteratur“ (239), Krumbacher K., „Geschichte der byzantinischen Literatur“ (291), Murad F., „Ararat und Massis. Studien zur armenischen Alterthumskunde und Literatur“ (295) և ուրիշներ, որոնք գերազանցապես, դասական բանասիրությանն են պատկանում, ուստի և պետք է տեղափոխված լինեին XIV դիտում, նմանապես՝ հայ վկայաբանական գրականության շրջանակին պատկանող նյութերը, ինչպես են՝ Gray L. H., „Two Armenian Passions of Saints in the Sasanian period“ (289), Peeters P., „La Passion arménienne de S. Phocas“ (298), նույնի „Une Passion arménienne de S. Georges“ (298), „Une Passion arménienne des SS. Abdas...“ (298) և „La Passion arménienne de S. Serge le Stratélate“ (298) երկերը:

XIX դիտում Սալմասլյանն ամփոփել է ձեռագրերի և ձեռագրագրությունների վերաբերյալ բաղմաթիվ պիտանի նյութեր: Կարծում ենք, որ այստեղ պետք էր թողնել միայն ձեռագրագրական-հնագրական նյութերը, իսկ ձեռագրացուցակները, որպես գերազանցապես մատենագրական հրատարակություններ:

պետք էր տեղափոխել XXII դլխի մեջ: Այստեղ՝ XIX դլխում կան նաև ուրիշ փաստեր, որոնք անհամատեղելի են ձեռագրագիտություն հետ: Այսպես՝ Conybeare F. C. անվան տակ գրանուժ է՝ „Protevangelium Jacobi; from an Armenian Manuscript in the Library of the Mechitarists in Venice“ (380), որ է՝ Հակոբոս առաքյալին վերագրված «Նախաւետարանի» հայերեն բնագրի թարգմանությունը, որ կատարել է Կոնիբերը Վենետիկի Մխիթարյան մատենադարանի մի ձեռագրի համեմատ: Սալմասլյանն այս ձեռագիրը բաժնի հիման վրա մատենադրական այս հրատարակությունը գետեղել է XIX դլխի մեջ: Այսպես նաև՝ Issaverdens J. անվան տակ գրանուժ է՝ Երկու գրքեր՝ „The History of Assaneth“ և „The Uncanonical Writings of the Old Testament“ (381), որոնք Հին կտակարանի հայերեն անվավերականների թարգմանություններ են պարզապես և ուղղակի մատենագրության են պատկանում, բայց որովհետև գրքերի ճակատում նշված է, որ նրանց բնագրերը գտնվում են Ս. Ղազարի ձեռագրերում, Սալմասլյանն այս գրքերի համար հարմար տեղ է համարել XIX դլուխը, նմանապես՝ Cowell (ուղղել՝ Colwell) E. C. անվան տակ „The Caesarean Readings of Armenian Gospel Manuscripts“ (380), որը մատենադրական-բնագրագիտական հետազոտություն է և հայերեն Ավետարանի ձեռագրերում եղած Կեսարյան ընթերցումներն է ուսումնասիրում, թյուրիմացաբար տեղափոխել է այս XIX դլխի մեջ:

Բաժինների հարցում զեռ կարելի էր նշել, որ Thalasso A., „Anthologie de l'amour asiatique. Afghanistan—Arménie“-(203), որը խոսում է Նահապետ Քուչակի, Պետրոս Դուրյանի և ուրիշների բանաստեղծությունների մասին, պիտի լիներ ոչ թե VII դլխում՝ ընկերային-մշակութային բաժնում, այլ գրականության բաժնում, որ է զլ. XII: Կարելի էր նմանապես նշել տարօրինակորեն VI գլխում՝ իրավագիտության բաժնում տեղափոխված այն երեք զործերը, որոնք հայագետ A. Zanolli-ի սրտին են պատկանում. նրանցից առաջինը՝ „Codici armeni ignorati delle biblioteche di Perugia e di Rimini“ (184) ձեռագրերի ցուցակ է և պետք է դնար մատենագիտության բաժնի՝ զլ. XXII: Իսկ մյուս երկուսը՝ „Lezioni marginali ai quattro libri del Re...“ և „Notizie sulla catena di Giorgio di Skevra...“ (184) բնագրական և մատենադրական ուսումնասիրություններ են և պետք է տեղափոխված լինեին բանասիրության բաժնում՝ զլ. XIV:

Ինչպես դժվար չէ նկատել բաժինների հարցում մենք կանգ առանք միայն մի քանի զույգների վրա, այն էլ՝ հարևանցիորեն, խուսափելու համար նմանօրինակ փաստերի կրկնություններից:

Սի կոզմ թողնելով բաժինների խնդիրը՝ ասենք, որ հայագիտական այս մատենագիտության մեջ նկատվում են հայագիտական նյութերի զգալի պակասներ և նույնիսկ բազմամասնյա նյութերի ամբողջական պակասներ: Բերենք մի ակնառու օրինակ:

II դարի հույն իմաստասեր Արիստիդես Աթենացու անունով հասած երկերի և հատկապես նրա Ջատագովության մասին գոյություն ունեցող բանասիրական սովոր գրականությունից ոչ մի հետք չկա Սալմասլյանի գրքում: Հայտնի է, որ Արիստիդեսի Ջատագովության հունարեն բնագիրը կորած է. բայց Վենետիկի Մխիթարյանները, մի ընդարձակ հատված գտնելով V դ. հայերեն թարգմանությամբ, այն հրատարակեցին 1878 թ.: առնթեր նրա (հայերեն բնագրի) լատիներեն թարգմանությամբ: Այս գյուտը մեծ հետաքրքրություն առաջացրեց Բանասիրական աշխարհում: Դրանով հատվածն արագորեն տարածվեց արևմտյան լեզուների թարգմանվելով լատիներեն տարբեր թարգմանությունների թվը հնտգհետ հասավ 3-ի. հրատարակվեցին նաև գերմաներեն 4 տարբեր թարգմանություններ, ֆրանսերեն՝ 1, ռուսերեն՝ 3, անգլերեն՝ 1. և այդ թարգմանություններից շատերը վերահրատարակվեցին մի քանի անգամներ: Հայ մատենագրության մեջ հայտնաբերված այս բնագիրը մասնագետներին զբաղեցրեց շատ երկար, նույնիսկ այն բանից հետո, երբ նույնի ասորերեն ամբողջական թարգմանությունը ևս հայտնաբերվեց ու հրատարակվեց 1891 թ., և մինչև վերջն էլ հայկական բնագիրը պահեց իր առաջնակարգ նշանակությունը համեմատական այն ուսումնասիրություններում, որոնց նպատակն էր ասորերեն և հայերեն թարգմանությունների և հունարեն հատակոտորների հիման վրա վերակազմել բնագիրն իր սկզբնական կնքադրանքում: Ցույց տալու համար, թե եվրոպական լեզուներով Արիստիդեսի հետ կապված հայագիտական որքան հրատարակություններ կան, որոնց տեղը լրիվ բաց է մնում «Հայաստանյան մատենագիտության» մեջ, ժամանակագրական կարգով նշենք հետևյալները.

Նախ յույս են տեսնում Արիստիդեսի երկերի հայերեն հատվածները՝ „Sancti Aristidis philosophi Atheniensis sermones duo, quorum originalis textus desideratur, ex antiqua armeniaca versione nunc primum in latinam linguam translatos“, Venetiis, 1878. Դրանից հետո Արիստիդեսի հարցին հատուկ ուսում-

Նասիրություններ են նվիրել՝ Baunard J. L., „Découverte d'un fragment de l'Apologie de S. Aristide d'Athènes“, 1879. Gautier L., „Un fragment de l'Apologie d'Aristide“, 1879. Massebleau L., „De l'authenticité du fragment d'Aristide“, 1879. Sasse F., „Ein in armenischer Übersetzung aufgefundenes Fragment der Apologie des Aristides“, 1879. Эмман Н. О. „Отрывок из Апологии Аристиды, христианского апологета“, 1879 և „Несколько слов в защиту непризнаваемой Эрнестом Реназом подлинности новооткрытой Апологии Аристиды“, 1880. Bucheler F., „Aristides und Justin, die Apologeten“, 1880. Doucet H., „L'Apologie d'Aristide et l'Épître a Diognete“, 1880. Himpel F. von, „Das Fragment der Apologie des Aristides...“, 1880. Rummier L., „De Aristidis philosophi Atheniensis sermonibus duobus apologeticis“, 1881. Harnack A., „Die Überlieferung der griechischen Apologeten des zweiten Jahrhunderts...“, 1882. Himpel F. von, „Aristides, Apologet des zweiten Jahrhunderts“, 1882. Hilgenfeld A., „Die Überlieferung über die griechischen Apologeten des Christenthums...“, 1883. Остроумов С. И., „Разбор сведений Евсевия Кесарийского и бл. Иеронима Стридонского о греческих апологетах христианства второго века“, 1886. Bellesheim A., „Die wiederaufgefundene Apologie des Aristides von Athen...“, 1891. Jacquier E., „L'Apologie d'Aristide“, 1891. Rendel Harris J., „The Apology of Aristides on behalf of the Christians“, 1891. Seeberg R., „Die Apologie des Aristides“, 1891. Stokes G. T., „The Apology of Aristides“, 1891. Кулаковский Ю., „Вновь открытая Апология христианства II века“, 1892. Picard M., „L'Apologie d'Aristide“, 1892. Schönfelder, „Die Apologie des Aristides“, 1892. Zahn Th., „Die Apologie des Aristides“, 1892 և „Eine Predigt und ein apologetisches Sendschreiben des athenischen Philosophen Aristides“, 1893. Seeberg R., „Die Apologie des Aristides“, 1893. Hennecke E., „Zur Frage nach der ursprünglichen Textgestalt der Aristides-Apologie“, 1893. Raabe R., „Die Apologie des Aristides“, 1893. Pape P., „Die Predigt und das Brieffragment des Aristides“, 1894. Seeberg R., „Der Apologet Aristides“, 1894. Vetter P., „Aristides-Citate in der armenischen Litteratur“, 1894. Hora E., „Untersuchungen über die Apologie des Aristides“, 1895.

Крестников И., „Христианский апологет II го века, афинский философ Аристид...“, 1904, Geffcken J., „Zwei griechische Apologeten“, 1907. Vona C., „L'Apologia di Aristide“, 1950.

Արիստիդյան ուսումնասիրությունների գեոռլոգիկ պատկերը ներկայացնող այս հրատարակությունները չէ, որ միայն բացակայում են Սալմասլյանի մոտ շաղկապական ուրիշ ծանոթ հրատարակությունների բացակայությունը նույնպես զգալի է։ Հայտնի է, որ Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության հունարեն բնագիրը կորած է և նրանից միայն բաղվածքներ են մնացել։ Իսկ V դ. կատարված նրա հայերեն ամբողջական թարգմանությունը 1818 թ. Վենետիկի Մխիթարյանների կողմից հրատարակվելով զգայացունց հայտնություն եղավ գիտական աշխարհի համար։ Այդ հրատարակությունը, որ հայկական բնագրին զուգահեռ կրում է նրա լատիններենը՝ Մ. Ավգերյանի թարգմանությամբ, ինչպես և պահպանված հունարեն հատվածները, ունի նաև լատիներեն անվանաթերթ՝ „Eusebii Pamphili Caesariensis episcopi Chronicon bipartitum, nunc primum ex armeniaco textu in latinum conversum, adnotationibus auctum, graecis fragmentis exornatum opera P. Jo.-Baptistae Aucher Ancyranl, monachi armeni et doctoris Mechitaristae“, Venetia, 1818. Սալմասլյանն այս հրատարակությունը նշել է՝ իր կողմից վերամշակված խորագրով՝ Eusebe Pamphile, „Chronicon bipartitum graeco-armeno-latinum, ... nunc“ (72). Ընդունենք, որ սա մի կերպ նշված է. բայց նույն 1818 թ. Միլանում Ա. Մայի և Հովհ. Ջոհրապյանի տշխատությամբ հրատարակվել է Եվսեբիոսի ժամանակագրության մի այլ թարգմանություն ևս, որի հետքը բոլորովին չկա «Հայաստանյան մատենագիտության» մեջ։ Ահա այդ նույնպես կարևոր հրատարակությունը, որը, որպես համեմատության եզր Ավգերյանի հրատարակության հետ, բանավեճի առիթ է տվել մասնագետներին։ „Eusebii Pamphili Chroniconum canonum libri duo, opus ex haicano codice a Johan. Zohrabo diligenter repressum et castigatum. Angelus Maius et Johannes Zohrabus nunc primum conlunctis curis latinitate donatum notisque illustratum additis graecis reliquis ediderunt“, Mediolani, 1818. Չկանա Ա. Schoene-ի եռահատոր հրատարակությունը, որը նույնպես Եվսեբիոսի հայկական բնագիրն է ներկայացնում և լույս է տեսել 1875 թ. նրա առաջին հատորն է՝ Eusebi Chroniconum liber prior. Edidit Alfred

choene. Armeniam versionem latine factam ad libros manuscriptos recensuit H. Petermann. Graeca fragmenta collegit et recognovit, appendices chronographicas sex adiecit A. Schoene*, Berolini, 1875.

Կարելի է գեղ չարց տալ, թե ո՞ւր են բնդիրացի հայադետ G. Garitte-ի այն կարևոր գործերը, որոնք Աղաթանգեղոսի ուսումնասիրությանն են վերաբերում՝ „La traduction manuscrite de l'Agathange grec“, 1941. „Fragments palimpsestes de l'Agathange grec“, 1943. „Fragments de l'Agathange gres en traduction arabe“, 1946. „Une version arabe de l'Agathange grec dans le Sin. ar. 395“, 1950:

Հայտնի «Անսիդր Անտիոքայ» բնագիրը, որ Ղ. Ալիշանի ֆրանսերեն թարգմանության հրատարակվել է, Սալմասյանի մոտ նշված է՝ Sempad le Connétable, „Assises d'Antioche“ (182). Բայց ո՞ւր են նրա ուսերեն երկու թարգմանությունները՝ „Ассизы Антиохийские. Перевел с киликийского диалекта армянского языка А. А. Папоян“, 1958. և „Антиохийские Ассизы для вассалов [предусматривающие отношения] между сеньором и вассалами. Перевел с киликийского диалекта армянского языка К. Н. Юзбашян“, 1958.

Բացակայում են Աստվածաշնչի հայերեն դասական թարգմանությանը նվիրված կամ այդ չարցը շոշափող մասնագիտական այնպիսի ուսումնասիրություններ, ինչպես՝ Тер-Мовсесян М., „История перевода Библии на армянский язык“, 1902. Martin J. P. P., „Introduction a la critique textuelle du Nouveau Testament“ հատորները՝ 1882—86 թթ. Lagrange M.-J., „L'Évangile selon saint Marc“, 1911. Նույնի „Le groupe dit Césaréen des manuscrits des Évangiles“, 1929. Նույնի „Introduction a l'étude du Nouveau Testament“, 1935. Նույնի „Manuel de critique textuelle du Nouveau Testament“, 1935. Ermoni V., „Les épîtres aux Corinthiens et la critique“, 1899. Lyonnet S., „Notes philologiques sur la première version arménienne des Évangiles“, 1938. Euringer S., „Une leçon probablement hésychienne“, 1898 և „Bemerkungen zur georgischen Übersetzung des Hohenliedes“, 1916. Cuenet G., „Exactitude et adresse dans la version arménienne de la Bible“, 1935 և „À propos des versions arménienne et géorgienne des Évangiles“, 1949, և շատ նմաններ, դեռ չխոսելով այնպիսի հրատարակու-

թյունների մասին, որոնք թեև նվիրված են Աստվածաշնչի վրացական թարգմանության ուսումնասիրությանը, բայց շոշափում են նաև հայկական թարգմանության հետ նրա ունեցած աղերսի չարցերը, ինչպիսին են գերմանացի վրացագետ-հայագետ J. Molitor-ի թարգմանվող գործերը:

Հնարավոր է չհիշատակել „Lettres édifiantes et curieuses concernant l'Asie, l'Afrique et l'Amérique“ հանրահայտ հատորավոր ժողովածուն, որը պատմական, տեղադրական, ազդարարական թանկահին նյութեր է պարունակում և հրատարակվել է մեկից ավելի անգամներ: Այս հրատարակությունը ևնք գտնում մատենագիտության ո՛չ պատմության բաժնում, ո՛չ աշխարհագրության, ո՛չ ուղևորությունների, ո՛չ ազգագրության, և ո՛չ էլ կրոնի բաժնում:

Սալմասյանը Héthoum անվան տակ (82) Հեթում պատմչի «Ծագիկ պատմութեանց երկրորդին Արևելից» կամ «Պատմութիւն Թաթարաց» երկի 2 ֆրանսերեն, 2 լատիներեն հրատարակություններ է նշանակել 1517, 1529, 1585 և 1735 թվականներից. նաև 1 իտալերեն թարգմանություն, որը հրատարակվել է Nicetas Acominatus, „Historia degli Imperatori greci“ (104) գրքի վերջում, 1562 թ.: Անշուշտ լավ է, որ նշանակված են այս հազվագյուտ հրատարակությունները. բայց ավելի լավ կլիներ, եթե նշանակված լիներ նաև նրա ֆրանսերեն և լատիներեն բնագրերի այն հրատարակությունը, որը գտնվում է հայերիս համար ամենամատչելի մի հատորում, որ է՝ E. Dulaurier-ի ջանքերով հրատարակված՝ „Recueil des historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres. Documents arméniens. Tome II. Documents latins et français relatifs a l'Arménie“, Paris, 1906, p. 111—253 (ֆրանսերենը՝ „Hayton. La flor des estoires de la terre d'Orient“), 255—363 (լատիներենը՝ „Haytonus. Flos historiarum terre Orientis“). Շատ տեղին եղած կլիներ, եթե այստեղ մի անգամ ընդմիջտ ի մի բերված լիներ Հեթումի այս երկի բոլոր հրատարակությունների լիակատար նկարագրությունը, որի համար ամեն հնարավորություն կար Փարիզում, ուր պատրաստվել է «Հայաստանյան մատենագիտությունը»: Մատենագետ J.-Ch. Brunet-ն հիշատակում է ֆրանսերեն և լատիներեն բազմաթիվ հրատարակություններ, որոնց հետ նաև մի անգլերեն թարգմանություն՝ „Lytell Chronicle“ խորագրով, տպագրված Լոնդոնում:

մոտավորապես 1520—1530 թթ.⁹ Ա. Ղազիկյանի՝ այլ աղբյուրներից բերած տեղեկությունների համաձայն գոյություն ունեն խալիբրեն երկու հրատարակություններ, ինչպես և սպաներեն մի անտիպ խարդամանություն¹⁰։

Այս օրինակներով սահմանափակվենք պակասների հարցում, նշելով, որ համեմայն դեպս տարապայման խոստովյան իրավունք չկա որևէ մատենագիտությունից բացարձակ լիակատարություն պահանջելու։ Այլ է, սակայն, ճշգրտության հարցը, որովհետև, եթե այդ բացակայում է, անհնարին է լինում գտնել տվյալ գիրքը։

Սալմասլյանի մոտ Ղ. Ալիշանի ճշմարտ հայկականը՝ աշխատության ֆրանսերեն և այլ լեզուներով հրատարակությունները նշվել են յուրաքանչյուր լեզվի սեփական խորագրով՝ «L'Arménie pittoresque» և այլն (17), և դա շատ ճիշտ է։ Բայց շատ ու շատ տեղերում Սալմասլյանը չեղվել է զրանից։ Nicolay N. de, «Les navigations, pèlerinages et voyages...» (262) ֆրանսերեն հրատարակության տակ նա գերմաներեն, իտալերեն և անգլերեն հրատարակություններ հիշատակելիս՝ սեփական խորագրեր տալու փոխարեն նշել է՝ Ibidem, ցույց տալու համար, որ նրանք հաջորդաբար միևնույն գիրքն են՝ տարբեր լեզուներով թարգմանված։ Նույն երևույթը տե՛ս նաև Ellis G. (20), Bernstein E. (58), Bodenstedt F. (59), Gibbon E. (76), Sandwith H. (116) և այլ անունների տակ։ Այս ձևը, նախ և առաջ, նկարագրությունների ճիշտ ձև չէ, որովհետև ընթերցողը, չիմանալով զրբի իսկական խորագիրը, չի կարող այն գտնել տվյալ լեզվի զրադարանային քարտուրանում։ Երկրորդ՝ նման գեղգերում կարող էր նշվել ոչ թե Ibidem, որ նշանակում է՝ «նույն տեղում» (այսինքն՝ «միևնույն» նախորդ հրատարակության մեջ»), այլ Idem, որ նշանակում է՝ «նույնը» (այսինքն՝ «միևնույն» նախորդ գիրքը [մի ուրիշ լեզվով])։ Բայց զրբերի որոնմանը խանգարող հանգամանքը միայն սա չէ։

⁹ SL^{us} J.-Ch. Brunet, Manuel du libraire et de l'amateur de livres, t. III, Paris, 1862, p. 66—69. նաև՝ P. Deschamps et G. Brunet, Manuel du libraire et de l'amateur de livres, suppl. t. II, Paris, 1878, p. 596.

¹⁰ Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, հատ. Ա, Վենետիկ, 1909, էջ 1554.

Ի՞նչպես հնարավոր է գտնել, օրինակ, Martinus P., «Analecta sacra Patrum Antenicenorum; ex codicibus orientalibus (Syriacis, Armentacis, Copticis) collegit et ed. et latine vertit. Paris, 1883» (157), երբ այսպիսի ինքնուրույն հրատարակություն գոյություն չունի։ Այս երկը գտնվում է J. B. Pitra-ի «Analecta sacra Spicilegio Solesmensi parata» խորագիրն ունեցող հայրախոսական ժողովածուի մեջ՝ կազմելով նրա IV հատորը։ Ավելացնենք, որ խնդրո առարկա երկն այս հատորում սեփական անվանաթերթ չունի, այլ միայն մի ներքին խորագիր, որին Սալմասլյանն արհեստականորեն կցել է IV հատորի հիման վրա իր կազմած նշումը՝ «Paris, 1883». Բացի այդ՝ Սալմասլյանը վերախմբագրել է հատորի հիշյալ ներքին խորագիրը, դուցե և ինքն էլ այդպես գտնելով իր ձեռքի տակ եղած ռեկլամային մի զրոցուցական ձևով։ Իսկական խորագիրը՝ «Analecta sacra Patrum antenicenorum; ex codicibus orientalibus collegit J. P. Paulinus Martinus, Scripturae Sacrae lector in superiori schola theologica Instituti Catholici Parisiensis»։

Ի՞նչպես գտնել՝ Ermoni V., «Etude critique sur la version arménienne de la Bible. Fribourg, 1898» (316), երբ այդպիսի գիրք չկա. դա մի ընդարձակ հոդված է, որը լույս է տեսել հետևյալ ժողովածուի մեջ. «Compte-rendu du IVe Congrès Scientifique International des Catholiques, tenu à Fribourg (Suisse) du 16 au 20 août 1897. Deuxième section: Sciences exégétiques», Fribourg, 1898.

Ի՞նչպես գտնել՝ Zanotti A., «Codicis armeni... Venezia, 1930» (184), երբ չի նշված, որ սա հոդված է, որը լույս է տեսել հետևյալ պարբերականում՝ «Atti del Reale Istituto Veneto di Scienze, Lettere ed Arti», t. LXXXIX, 1929/30, parte 2a, p. 1041—1059.

Ի՞նչպես գտնել՝ Photios, «Lettre de Photios au Katholikos d'Arménie. Trad. en russe par N. Marr, d'après le ms. 633 de la Bibliothèque Armentienne de Jerusalem» (162), այսինքն՝ «Թուղթ փոտայ՝ առ կաթողիկոսն Հայոց։ Ռուսերեն խարդամանությունն. Մատի բատ երուսաղեմի Հայոց Մատենադարանի № 633 ձեռագրի»։ Որպես հրատարակչական տվյալ՝ նշված է «St.-Petersbourg, PPS, 1892, t. XI» բայց թե ի՞նչ բան է PPS-ը՝ չի երևում։ Համառոտությունների ցանկում էլ չկա։ Բարեբախտաբար գիտենք, որ դա «Православный Палестинский Сборник»-ն է, որի XI հատորում գտնվում ենք, հայե-

րեն րնագրի հետ միասին, „Письмо патриарха Фотия к Захарии католикосу Великой Армении“ («Թուղթ Փաւստայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծայ»)։ Մյուս կողմից ուշագրավ է, որ վերոնշյալ ֆրանսերեն խորագիրը ոչ թե ողբերգի թարգմանությունն է, այլ պարզապես բացատրական ծանոթություն։

Դարձյալ ի՞նչպես գտնել Brosset M. F., „L'Histoire de David beg de Siounie. Trad. St.-Petersbourg, 1875“ (61), որը թարգմանությունն է «Դաւիթ Բէգ» գրքի, տպագրված 1871 թ. Վաղարշապատում։ Բայց ֆրանսերեն այսպիսի հրատարակություն գոյություն չունի։ Դա M. F. Brosset-ի հրատարակած „Collection d'historiens arméniens“ անունով հայտնի ժողովածուի 2-րդ հատորի նյութերից մեկն է, որը կրում է ոչ թե „L'Histoire de David beg de Siounie“ չին-ուս խորագիրը, այլ պարզապես մեկ բառով և ուղղադրված՝ „Davith-Beg“. Իսկ հրատարակությանը վերաբերող „St.-Petersbourg, 1875“ նշումը՝ պարզապես հիշյալ 2-րդ հատորի տպագրության վայրն ու տարեթիվն է։ — Այս կարգի մի անգո և խորագրով ու ամեն ինչով սարքովի հրատարակություն է նաև՝ Esaïa (ուղղել՝ Esaï), Patr., „L'Histoire du pays des Aghvans. Trad. par Brosset. St. Petersbourg, 1875“ (72), որ է Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից»։ Ստեռ, «Դաւիթ Բէգի» նման, Brosset-ի նույն 2-րդ հատորի նյութերից մեկն է, որի իսկական խորագիրն է՝ „Histoire d'Aghovante, par le catholikos Esaï Hasan-Dchalalians“.

Վերոնշյալ երկու անգո հրատարակությունների փաստը մեզ մղեց ստուգելու, թե արդյոք ի՞նչպես են արտացոլված Սալմասլյանի մոտ հիշյալ հատորի մյուս նյութերը. և պարզվեց, որ մյուս նյութերը նույնիսկ սխալ նկարագրության էլ չեն արժանացել և գլխովին դուրս են թողնվել. դրանք են՝ „Mémoires historiques sur les Sofis, par le Diacre Zakaria“ և „Cartulaire du saint asile de Iohannou-vank, par le Diacre Zakaria“ (Զաքարիա սարկ. Քանաբեոցու «Պատմութիւն և կարգ թաղաւորացն Պարսից» և «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից») և „Samouel d'Ani. Tables chronologiques“ (որ է՝ Սամուել Անեցու Ժամանակագրության 2-րդ մասը՝ Ժամանակագրական աղյուսակները)։

Բավականին շատ են զեպքեր, երբ ֆրանսերեն խորագրով են տրվում ոչ-ֆրանսերեն գրքեր, և սա նույնպես անգտանելի է դարձնում

որոշվող գիրքը. օրինակ՝ Agopian A. (17), Lyaister A. F. (24), Grzegorzewski J. (79), Tcholakides D. I. (168) և այլն։ Բայց սա, ասենք, գեո ոչինչ, հաշվի առնելով, որ կողքին նշվում է, թե գիրքը գերմաներեն, ռուսերեն, լեհերեն կամ հունարեն լեզվով է, դա, սակայն, շատ զեպքեր, երբ այդ էլ չի նշվում, և ընթերցողն ընկնում է կատարյալ թյուրիմացության մեջ, կարծելով, թե գիրքը ֆրանսերեն է։

Օրինակ՝ Hanna, „Histoire de Jérusalem et des Saints-Lieux. Constantinople, 1782“ (80), այսինքն՝ «Պատմութիւն Երուսաղէմի և Սուրբ-Տեղեաց». բայց սա ոչ թե ֆրանսերեն, այլ հայերեն հրատարակություն է՝ Հովհաննես Հաննայի «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս», ապ. Կ. Պոլիս, 1782 թ.։ Այս թյուրիմացությունը նրանից է, որ Սալմասլյանն ինքը չի տեսել այսպիսի գիրք և հիմնվելով ֆրանսերեն գրված մի կողմնակի տեղեկության վրա, կադմել է մատենագիտական հիշյալ նկարագրությունը։ Այստեղ նշում ենք այն հանգամանքը, որ այս կամ այն լեզվով տպագրված գիրքը կարելի չէ ներկայացնել ուրիշ լեզվի թարգմանված խորագրով, զեռ առանց խոսելու այն մասին, որ «Հայաստանյան մատենագիտությունն» սկզբունքով հայերեն գրքերի տեղը չէ։

Այսպես է նաև Jean d'Argich, „Liturgie arménienne. Constantinople, 1799“ (152), այսինքն՝ «Կարգ պատարագի Հայոց»։ Սա նույնպես հայերեն հրատարակություն է՝ Հովհաննես Արժիշեցու «Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ ս. պատարագին», տպ. Կ. Պոլիս, 1799 թ.։ Այստեղ ես ֆրանսերենում աղավաղված է ոչ միայն գրքի վերնագիրը, այլև հեղինակի մականունը։ Ըստ Սալմասլյանի, կամ ըստ նրա աղբյուրի, Արժիշեցի-ն Արժիշ քաղաքից է, ուստի և գրել է d'Argich, սակայն այս բառը ֆրանսերեն ուղղագրությամբ կարող է կարդացվել միայն դ'Արժիշ և ոչ թե դ'Արժիշ. իսկ դ'Արժիշ կարդալու համար պետք էր գրել d'Ardjiche. Սակայն թե՛ մեկը, և թե՛ մյուսը սխալ են արդեն. քաղաքի անունը ոչ թե Արժիշ է, այլ Արժէշ, ուստի՝ պիտի լիներ d'Ardjèche.

Այսպես է նաև հետևյալը. Arraquel, „Histoire d'Arménie, depuis l'an J. C. 1443 jusqu'en 1682... Amsterdam (s. d.)“ (54)։ Կարելի է անվերջ որոնել այս գիրքը և չգտնել։ Նախ արտառոց Arraquel-ը Առաքել անունն է, անշուշտ՝ Դավրիժեցին. իսկ գրքի վերնագիրն ասում է՝ «Պատմութիւն Հայոց, սկսեալ ի 1443 թուականութենէն Քրիստոսի մինչ

ի 1682...»։ Հրատարակությունը նշված է՝ «Ամստերդամ (անթվական)»։ Այս բոլորը բաղկացած է կցկտուր, սխալ ու պատահական տեղեկություններից, որոնք լուկ արձագանքն են Դավրիժեցու Պատմության Ամստերդամի 1669 թ. հայերեն հրատարակության։

Սալմասյանը Nersès IV Glajetzi (կարդա՝ Գլաժեցի) անվան տակ որպես ֆրանսերեն զիրք գրել է՝ «Discours synodal, suivi d'un grand nombre de ses lettres. Venise, St. Lazare, 1825, 332 p.» (159), որը բառացի նշանակում է՝ «Առևանարանություն, հանդերձ բազմօր ի թղթոց նորին»։ Վենետիկ, Ս. Ղազար, 1825, 332 էջ»։ Բայց ի՞նչ հրատարակություն է սա։ Եթե վերնագրի առաջին բառերը ներսև Շնորհալու «Ընդհանրականի» մասին են, և կասկած չկա, որ նրա մասին են, ապա այդ ղեկորում պիտի լինեն ոչ թե «Discours synodal», այլ «Lettre pastorale» կամ «Lettre encyclique»։ Բայց միայն այդ չէ։ Նկարագրությունն ամբողջովին երևակայական է և գուշակողական արվեստի օգնությամբ միայն կարելի է ասել, որ այստեղ պարզապես ի մի են ձուլված տեղեկություններ հայերեն հետևյալ երկու տարբեր հրատարակությունների մասին. նախ՝ «Թուղթ ընդհանրականը»՝ տպ. 1825 թ. (բայց ոչ Վենետիկում, այլ Կ. Պոլսում) և ապա՝ «Նամականիս», որը տպագրված է Վենետիկում և ունի 332 էջեր (բայց ոչ 1825 թ., այլ 1838 թ.)¹¹։

Դարձյալ որպես ֆրանսերեն ներկայացված հայերեն հրատարակություն է Nersès IV Glajetzi «Poésies sacrées et historiques. Venise, St. Lazare, 1830, 620 p.» (159)։ Այս վերնագրին ասում է՝ «Գեղերթուածք սրբադասք և պատմականք»։ Սա ուրիշ բան չէ, եթե ոչ Շնորհալու «Բանք չափաւը», տպ. Վենետիկ, 1830 թ., 620 էջ¹²։

Այսպես նաև՝ Nersès de Lampron. «Discours synodal et homélies sur l'Ascension et la Pentecôte. Venise, St. Lazare, 1787» (159)։ Սա ևս հայերեն է՝ Լամբրոնացու «Առևանարանություն և ճառք ընտիրք ի Համբարձումն Դրիստոսի և ի Դալուստ հոգւոյն սրբոյ», տպ. 1787 թ. Վենետիկում։

Նամանակս՝ Avédichian (ֆրանսերենով կարդա՝ Ավեդիչյան) G. «Explication des anciens hymnes de l'Eglise Arménienne. Venise, 1814» (138), բառացի՝ «Բացատրու-

թիւն նախնի շարականաց Հայաստանեայց եկեղեցւոյ»։ Ուրիշ բան չէ, եթե ոչ Գ. Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց որք պաշտին ի հասարակաց ժամակարգութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» զիրքը։

Սակայն հայերեն զրքերի շարման համար միայն ֆրանսերենը չէ, որ պիտանի է համարվել։ Օղտագործվել են հավասարապես նաև լատիններենը, իտալերենը, անգլերենը, գերմաներենը և այլն։ Այստեղ մենք ունենք Եզնիկի «Եղծ աղանդոցի» մի հայերեն հրատարակության նշումը լատիններեն խորագրով՝ Eznik de Kolb, «Refutatio Haereticorum Armeniace. Venise, 1852» (146), որ, ըստ Էրեուլթին, Վենետիկի 1850 թ. տպագրության ազավաղ արձագանքըն է¹³։ Այսպիսի մի փաստ է նաև, լատիններեն սարքովի խորագրով, Vetter P., «Dissertationes variae patrologicae, armeniace. Vindobonae, 1895» (171), որը հետևյալ հայերեն հրատարակությունն է. «Հայկական աշխատություններ հայադէտ Պ. Ֆեթթէրի, ի մի ամփոփուած և թարգմանուած հանդերձ ծանոթութեամբք ի Ն. Յակովբայ Վ. Տաշեան, Մխիթ. ուխտէն», Վիեննա, 1895։

Մի այլ թյուրիմացություն է՝ Pitra (ուղղել՝ Pitra) J. B., «Allegoriarum in Physiologum Interpretatio vetus armenia» (298)։ Լատիններեն այս խորագիրը փշտ է, բայց այս խորագրի տակ տպագրված է ոչ թե լատիններեն ընդիր, այլ հայերեն թարգմանական առակների այն ժողովածուն, որը ծանոթ է «Բարուախօս» անունով և գտնվում է Pitra-ի «Spicilegium solesmensi»-ի III հատորում¹⁴։ Այսպիսով նաև պարզ է, որ Pitra-ն «Բարուախօսի» հեղինակը չէ, ինչպես նշված է Սալմասյանի մոտ։

Այստեղ ունենք նաև Ղ. Ինճիճյանի «Ճնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» ևսահատոր երկի իբր թե գոյություն ունեցող իտալերեն թարգմանության մատենագիտական նկարագրությունը, այն էլ՝ երկու տարբերակներով. իսկ այս իտալերեն երկու տարբերակներն էլ ներկայացված են ոչ թե իտալերենով, այլ ֆրանսերեն լեզվով։ Տարբերակներից մեկը գտնվում է XVI դիմում՝ հնագիտության բաժնում՝ Indjldjian L., «Antiquités ou archéologie de l'Arménie. Trad. en italien par l'abbé Cappelletti. Turin, 1841» (351)։ Երկուր գտնվում է I դիմում՝ աշխարհագրություն ու տեղագրության բաժնում՝ Indjldjian L., «Description géographique de l'an-

¹¹ Հմմտ. Ա. Ղազարիյան, Հայկական նոր մատենագիտութիւն, հատ. Բ, Վենետիկ, 1912, էջ 247—8 և 251։

¹² Հմմտ. նույն տեղում, էջ 233։

¹³ Հմմտ. Ա. Ղազարիյան, հատ. Ա, էջ 553։

¹⁴ Հմմտ. Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, հատ. Ա, էջ 1062։

cienne Armenie. Trad. en Italien par J. Cappelletti. Venise, 1822* (21). Ռոդոններ այն հարցը, թե իտալերեն այս գիրքը ու՞ր է ե՞րբ է հրատարակվել, Turin-ում, թե Venise-ում կամ այլուր, և կամ՝ 1811 թվականին, թե 1822. Ինչպես և այն հարցը, թե ի՞նչ խորագրի տակ գրանք պետք է որոնել իտալերեն գրքերի քարտարանում: Խնդիրն այն է, որ ինչ ճիճյանի այդ գիրքը իտալերենի չի թարգմանվել երբևր, այլ, ինչպես Ղազիկյանն է նշում, Խալացի հայագետ Կապպելլետին թիր Armenia գործը երկասիրած է օգտուելով րեզհանրապետ Ռեճիճյանի սոյն գործին¹⁵, այսինքն՝ իր երկը գրել է հետևելով Ռեճիճյանին, ճիշտ այնպես, ինչպես գերմանացի հայագետ F. C. Neumann-ն իր „Versuch einer Geschichte der armenischen Literatur“-ը գրելիս հետևել է P. S. Somal-ի „Quadro della storia letteraria di Armenia“ գործին: Ավելացնենք, որ թյուրիմացարար երկիցս Ռեճիճյանին վերագրված այդ գրքին մի երրորդ անգամ էլ պատահում ենք IV դվիսում՝ պատմության բաժնում, իսկական հեղինակի անվամբ և իսկական խորագրով, Cappelletti G., „L'Armenia“ (62), ուր նշանակված է, այս անգամ, նաև տպագրության իսկական վայրը՝ Firenze, և ոչ թե Turin կամ Venise. Բայց այստեղ ևս տարեթվի սխալ կա. 3 հատորներն էլ տպագրված են 1841 թ. և ոչ թե 1841—1842 թթ.:

Մի ուրիշ փաստ է, և այս անգամ անգլերեն մի անպատասխանատու աղբյուրից ծագած, Ա. զաթանգեղոսի որպես թե անգլերեն հրատարակություն՝ Agathange, „History of King Tiridates and the conversion of the Armenians to Christianity by St. Gregory the Illuminator. Venice, S. Lazzarus, 1862“ (51). Երավիչ նկարագրություն է. բայց սա ուրիշ բան չէ, եթե ոչ 1862 թ. Վենետիկում հրատարակված հայերեն բնագիրը՝ «Պատմություն Աղաթանգեղայ»:

Նույնպիսի մի թյուրիմացություն է՝ Nerses de Lampron, „Political Laws. Transl. by K. J. Basmadjian. Paris. 1907“ (181). Բնու այս խորագրի՝ Լամբրոնացու մի երկը՝ «Քաղաքական օրենքը» հայերենից անգլերենի է թարգմանվել Կ. Հ. Բասմաջյանի կողմից: Լոկ երևակայություն է և Լամբրոնացին «Քաղաքական օրենք» անվամբ երկ չունի և ոչ էլ զա անգլերենի է թարգմանվել: Իրականությունը հետևյալն է: Զեռագրերից վաղուց է հայտնի քաղաքացիական (ոչ թե քաղաքական) օրենքների մի ժողովածու, որը կրում է «Օրենք յաղթող թագաւորաց քրիստոնէից Կոստանդիանոսի, Թէոդո-

սի և Լեոնի» խորագիրը և գրականության մեջ անվանվում է «Ասորա-հոռմեական օրենսգիրք»: Մի բանի անգամ տպագրված այս երկը, ձեռագրերում պահպանված հիշատակարանի համաձայն, 1196 թ. Լամբրոնացին է հայերենի թարգմանել «ի ծերացեալ հելլենացի մատենէ»¹⁶: Բասմաջյանի հրատարակության վերնագիրը, սակայն, այն տպավորություն է թողնում, որ կարծես Լամբրոնացին օրենսգրքի հեղինակն է. այսպես «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացույ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեոնի թագաւորաց Հռովմայեցւոց: Հրատարակեց Կ. Յ. Բասմաջեան», Փարիզ, 1907: Սալմասյանի մոտ՝ հայերեն բնագիրը ներկայացված է որպես նրա անգլերեն թարգմանությունը, իսկ հրատարակիչը՝ որպես անգլերենի թարգմանիչ: Ի դեպ՝ ասենք, որ Սալմասյանի մոտ չենք գտնում խնդրո առարկա օրենսգրքի հայերեն-գերմաներեն հրատարակությունը՝ Bruns K. G. und Sachau E., „Syrisch-römisches Rechtbuch aus dem fünften Jahrhundert“, Leipzig, 1880 (և նույնի 2-րդ տպագր. Leipzig 1961).

Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկը, որ ղուտ հայերեն հրատարակություն է, «Հայաստանյան մատենագիտության» մեջ տեղավորված է հեղինակի անվան անգլիական ձևով, իսկ գրքի վերնագիրը տրված է գերմաներենով. Timotheus, „Timotheus Älurus“ des Patriarchen von Alexandrien Widerlegung der auf der Synode zu Chalcedon festgesetzten Lehre...“ (169). Եթե միայն այսքան լիներ՝ կասեինք, թե մի հայերեն գիրք թյուրիմացարար գերմաներեն խորագրով է գնացել, ինչպես ուրիշներ. բայց հիշյալ վերնագրի շարունակություն մեջ կարդում ենք՝ „Armenischer Text mit deutschen und armenischen Vorwort“ (հայերեն բնագիր՝ գերմաներեն և հայերեն առաջարանով), որ ամենևին ճիշտ չէ: Իսկ գրքի հրատարակության վայրը նշված է Leipzig. հրատարակչությունը՝ Hinrichs, այն ինչ՝ գիրքը տպագրված է Էջմիածնում, Մայր Աթոռի տպարանում:

«Հայաստանյան մատենագիտության» մեջ գտնում ենք նաև այսպիսի հետաքրքրական մի հրատարակություն՝ Gerzely G. J., „Hijk Helisapethoboles Transilvanto. Vienna, 1894“ (225). Սա Գրիգոր Գովրիկյանի հայերեն հայտնի երկն է՝ «Հայք յեղիսարեթուպոլիս Դրանսիոլեանիոյ», հատ. Ա-Գ, Վիեննա, 1893—1904:

16 Հմմտ. Գ. Զարր հանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1883, էջ 754:

15 Տե՛ս Ա. Ղազիկյան, հատ. Ա, էջ 908:

Գոնես նշված լինելը, թե տրված խորագիրը լատինատառ հայերեն է: Բայց, առանց այն էլ որքան վրիպում կա ընդամենը՝ մեկ տող էլ չկազմող այդ նկարագրության մեջ, նախ՝ վերնագրում գոնե գրված լինելը՝ Elisabethu-polls. երկրորդ՝ նշված լինելը, թե զիրքը 3 հատորով է. երրորդ՝ ճիշտ նշված լինելը այդ հատորների տպագրության տարեթիվը. որ է 1893—1904, և ոչ թե լույս 1894: Բայց ամենից անհասկանալին զրքի հեղինակի անունն է՝ Gerzely, որը որքադրելի է Gergely, իսկ սա՝ հեղինակի Գրիգոր անվան հունգարական ձևն է: Ուրեմն՝ զրքի հեղինակը նշված է ոչ թե իր Գովրիկյան ազգանունով, այլ Գրիգոր անունով, այն էլ հունգարական Gergely ձևով, իսկ վերջինս էլ՝ աղավաղված Gerzely ձևով:

Այս անկանոնությունները, որոնց շարքը կարելի էր դեռ երկարել, վերաբերում են հայալեզու զրքերի Բայց նմանօրինակ հանդամանքների մեջ են նաև այլալեզու հրատարակությունները: Օրինակ՝ ռումինացի հայագետ N. Iorga-ի ռումիներեն հոդվածները, որոնք լույս են տեսել ռումինական „Neamul Romanesc“ թերթում, ներկայացված են իտալերեն խորագրերով. „Il problema armeno“, „Patriotismo“, „Romani e Armeni“, „Una manifestazione nazionale armena“, „Una nuova Armenia“ (84), „Lo sterminio degli Armeni in Turchia“ (214). Այսպես է նաև նույն հեղինակ մի զիրքը՝ „Quattro conferenze sugli Armeni. București, 1929“ (84), թեև մի ուրիշ տեղ նույնը կա նաև ռումիներեն խորագրով՝ „Patru conferinți despre Armenia... 1928“ (226). Վերջինիս տարեթիվը սխալ է. սխալ լինի 1929:

Ներսես Շնորհալու թղթերի և ճառերի լատիններեն թարգմանության խորագիրը տրված է ոչ թե լատիններենով, այլ ֆրանսերեն թարգմանությամբ, այն էլ սարքովի թարգմանությամբ՝ Nersès IV Glajetzi. „Correspondances dogmatiques. Trad. de l'arménien en latin par J. Cappelletti. Venise, St. Lazare, 1833“ (159). մինչդեռ պետք էր տալ լատիններեն իսկական խորագիրը՝ „Sancti Nersetis Clajensis Armeniorum catholici Opera, nunc primum ex Armenio in Latinum conversa notisque illustrata, studio et labore D. Josephi Cappelletti, presbyteri Veneti“, vol. I—II, Venetiis, 1833.

Սալմասլյանը Lourdet S. (ուղղել՝ Lourdet P. S.) անվան տակ նշել է՝ „Biblia Sacra armeno-latina, in supplementum ad Sacra Biblia polyglotta Waltoni. Genesis.

Tomus primus“ (155). Թեև այս երկը տպագիր չէ, այլ Մյունխենի հայերեն ձեռագրերից մեկը, որը Փարիզում է գրվել ու կրում է 1785 թ. 17, բայց Սալմասլյանը կարծել է, որ տպագիր է և նույնիսկ գտել ու նշել է տպարանի անունը՝ C. Regio. Այս սարքովի տվյալի անգիտարար հանված է նույն ձեռագրի անվանաթերթից, ուր հեղինակի մասին կարդում ենք՝ „Auctore Petro Simone Lourdet... librorum Censore Regio“ [(հեղինակությամբ Պետրոս Սիմոն Լուրդեի... թագավորական գրաքննչի): Հեղինակի Censor Regius (թագավորական գրաքննչի) տիտղոսը Սալմասլյանի մոտ դարձել է տպարանի անուն, այն էլ ոչ ուղղական, այլ հոլովված ձևով՝ C. Regio.

Տպարանի անուն հորինելու երևույթին հանդիպում ենք նաև Ա. Պալճյանի «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս...» երկի լատիններեն հրատարակության նկարագրության մեջ՝ Balgy A., „Historia doctrinae catholicae inter Armenos unionisque eorum cum Ecclesia Romana in Concilio Florentino. Vienna, Typ. de Prop. Fide, 1878“ (139). Այս զիրքը լույս է տեսել Վիեննայի Մխիթարյան տպարանից, ինչպես նշված է նրա իսկական անվանաթերթի վրա՝ „Typis Congreg. Mechitaristicae (W. Heinrich)“. Բայց, դրա փոխարեն, Սալմասլյանը նշել է՝ „Typ. de Prop. Fide“ (Պրոպագանդայի տպարան): Գրքի անվանաթերթից պարզվում է, որ հեղինակը կրում է „S. C. de Pr. Fide Consultator“ (Պրոպագանդայի խորհրդատու) տիտղոսը, որ Սալմասլյանը դարձրել է „Typ. de Prop. Fide“ (Պրոպագանդայի տպարան), մոռանալով, որ այդ տպարանը գտնվում է ոչ թե Վիեննայում, այլ Հռոմում: Նույն բանը նա հաջորդաբար կրկնում է երկու անգամ ևս նույն զրքի ֆրանսերեն և անգլերեն երևակայալ թարգմանությունները նշելիս՝ „Ibid. Trad. en français. Vienne, Typ. de Prop. Fide, 1878“ և „Ibid. Transl. into English. Vienna, Typ. de Prop. Fide, 1878“ (139). Թողնելով տպարանի հարցը՝ ասենք նաև, որ այսպիսի թարգմանություններ գոյություն չունեն:

Մի ուրիշ թյուրիմացություն է՝ Enychius (Patr.), „De Alexandr. ecclesiae origin., Omnia ex orient. monument. Partim armenice. Romae, Typ. Prop. Fide, 1661“ (146). Հայերեն հնատիպ զրքերի խուլարկուների համար գրավիչ կլինի այս նկարագրու-

17 Հմմտ. Գ. Գալեմբյարյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892, էջ 31:

թյան մեջ գտնվող armenice (հայերեն) բառը, ինչպես եղել է Սալմասյանի համար, և անխուսափելիորեն կսկսվեն հետադոտությունները: Այդ աշխատանքը մենք չուղեցինք թողնել ուրիշներին, և ի՞նչ պարզվեց: Այստեղ գործ ունենք ոչ թե armen-երեն, այլ arab-երեն մի հրատարակության հետ, այն էլ՝ խիստ աղավաղված կնարկարանով: Դրքի նկարագրությունը ծագում է բարդ ու կասկածելի աղբյուրներից: Դրքի հեղինակը Ալեքսանդրիայի մելիքական պատրիարք Եվտիքիոս Եղիպտացին է, X դար: Նրա արաբերեն աշխատություններից հանված մի գլուխ, որը քահայական աստիճանների մասին է խոսում, հրատարակվել էր նախ 1642 թ. Լոնդոնում՝ „Eutychii patriarchae Alexandrini Ecclesiae suae origines, ex ejusdem arabico nunc primum typis edidit ac versione et commentario auxit I. Selden. Londini. 1642“¹⁸. Սակայն 1661 թ. Հոմի աստվածաբաններից Abraham Ecchellensis-ը դեմ էր դուրս եկել վերահիշյալ հրատարակությանը և հրատարակել Selden-ի տեսակետներին և արարել են ընդդիմ չորից էր հրատարակել լատիներեն նոր թարգմանություն հետ միասին՝ „Eutychius... vindicatus ei suis restitutus Orientalibus, sive responsio ad Joan. Seldeni Origines... auctore Abr. Ecchellensi. Romae, 1651“¹⁹. Այս բոլորի խառնումն ու աղավաղումն է ներկայացնում Սալմասյանի նշած միավորը:

Այստեղ սահմանափակում ենք նաև անստույգ տեղեկությունների հիման վրա կազմված մատենագիտական նկարագրությունների շարքը: Անտարակուսելի է, որ «Հայաստանյան մատենագիտության» հեղինակն այս և նմանօրինակ ուրիշ շատ գեպքերում զո՞հ է գնացել կողմնակի աղբյուրներից բխող թյուրիմացությունների: Եվ սակայն՝ նա գիտակ է եղել մատենագիտության հիմնական կանոններին: «Մատյանների այս գիտությունը, — գրում է նա իր ներածությունում, — ունի իր խիստ, նույնիսկ պարտադիր կանոնները: Օրինակ, նա պահանջում է, որ վերնագիրը ցույց տրվի բացարձակ ճշգրտությամբ, նշվի տպագրության վայրն ու թվականը, հրատարակչի կամ տպագրիչի անունը...: Եվ այս կանոնները խստորեն չարգել ենք, որքան դա մարդկայնորեն հնարավոր է եղել» (13):

Այսպիսի մի հեղինակ չէր կարող իր աչքերի առջև եղած դրքի անվանաթերթը սխալ արտագրել, ոչ էլ հայերեն դրքի խորագիրը տալ

Ֆրանսերեն կամ լատիներեն կամ անգլերեն թարգմանությամբ, և կամ լատիներեն դրքի խորագիրը ֆրանսերենի թարգմանելով կամ ռումիներենը՝ իտալերենի և այլն: Իսկ այսպիսի փաստերը ցույց են տալիս, որ հեղինակն անսահմանորեն անձնատուր է եղել կողմնակի աղբյուրների, մի հանգամանք, որ նա ինքն էլ է հաստատում, ասելով, թե, հազարավոր դրքեր ու հանգեսներ թերթելուց բացի, «ես երբեմն հարկադրված էի լինում սահմանափակվելու Արևելքին վերաբերող մատենագիտական գրացուցակներով ու տեղեկատվությունով: Արտասահմանում ապրող բազմաթիվ բարեկամներ, իրենց ճշգրիտ ցուցումներով, սիրալիրությամբ դուրացրին իմ աշխատանքը» (13):

Սա է թյուրիմացությունների հիմնական աղբյուրը: Եվրոպական առևտրական-ռեկլամային գրացուցակներ և կասկածելի տեղեկատվություն՝ մի կողմից, իսկ արտասահմանում ապրող բարեկամներ թիրենց ճշգրիտ ցուցումներով՝ մյուս կողմից: Հիշենք, որ ժամանակին Գ. Զարբհանյանի «Հայկական մատենագիտությունը» ևս նույնպիսի պատճառներով ենթարկվել էր մամուլի խիստ քննադատությանը:

Լավ կլիներ, եթե Սալմասյանն իրեն անմատչելի եղած հրատարակությունները նշած լիներ աստղանշով և նույնիսկ աստղանիշ կրող յուրաքանչյուր նկարագրության տակ նշած լիներ իր աղբյուրը: Դրանով թե՛ ինքը զերծ կմնար հարյուրավոր վրիպումների պատասխանատվությունից և թե՛ միաժամանակ ընթերցողին կմղեր զգուշությամբ մոտենալու այդ նկարագրություններին:

Անցնենք այլ կարգի դիտողությունների:

Սալմասյանը բյուզանդական գրականությունից նշում է Sahak (Patr.) հեղինակային անունով երկու երկեր՝ „Narratio de rebus Armeniae“ և „Sancti... oratio invectiva adversus Armentios“ (165). Նախ ասենք, որ բյուզանդական գրականության մեջ հայոց կաթողիկոս համարված այս հեղինակի անունը ոչ թե Sahak է, այլ Isaac. Հետո՝ Սալմասյանն այս երկերը ցույց է առել որպես հրատարակված՝ J. P. Migne-ի „Patrologie“ (ուղղել՝ լատ. „Patrologia“ կամ „Patrologiae cursus completus“) մատենաշարի 132-րդ հատորում՝ բայց Migne-ն նույն անունով հրատարակել է երկու տարբեր մատենաշարեր, մեկը՝ լատիական աղբյուրների, բաղկացած 221 հատորից, մյուսը՝ հունական աղբյուրների, 161 հատոր: Պետք էր նշել, որ հիշյալ երկերը գտնվում են հունական շարքում:

Մյուս կողմից՝ պիտի ասել, որ թեև այս երկերից երկրորդը գրականության մեջ պահում

¹⁸ J.-Ch. Brunet, Manuel du libraire..., t. II, Paris, 1861, p. 117.

¹⁹ Ibidem, 1861, p. 117.

է Isaac հեղինակային անունը, բայց արդեն ապացուցված է, որ առաջինն ամենևին նույն հեղինակի գրչին չի պատկանում: Այդ գրվածքն ունեցել է 5 հրատարակություն և մի ժամանակ վերագրվում էր հիշյալ Isaac-ին, ինչպես է Migne-ի մոտ. բայց վերջին անգամ G. Garitte-ը, որ տվեց նրա քննական հրատարակությունը, ապացուցեց, որ նա ոչ մի կապ չունի Isaac-ի հետ և այժմ նրա հեղինակն անվանվում է Անանուհ Կայ քաղկեդոնական²⁰, Սալմասլյանը մի ուրիշ տեղ նշանակել է նաև այս վերջին հրատարակությունը՝ Garitte G., „La Narratio de rebus Armeniae...” (147), առանց նկատելու, որ խոսքը նույն երկի մասին է:

Սալմասլյանի մոտ Աբրահամ Կրետացուն է վերագրված Աբրահամ Անկյուրացու «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ» երկը. տես՝ Abraham Kretatsi, „Mélodie élégiaque sur la prise de Stamboul” (279) և ցույց է տրված A. Dethier-ի „Monumenta Hungariae Historica մատենաշարի XXII հատորը, մի դժբախտ հատոր, որը «տպարանի սահմաններից դուրս չի եկել»²¹: Այժմ, դոյություն չունեցող այս հրատարակության կողքին աններելի էր մոռանալ E. Bore-ի և M. Brosset-ի ֆրանսերեն թարգմանությունները, որոնցից առաջինը լույս է տեսել „Nouveau Journal Asiatique”-ում՝ 1835 թ.²², իսկ երկրորդը՝ Lebeau-ի „Histoire du Bas-Empire”-ում, հատ. XXI, 1636 թ.: Պետք էր նաև նշել C. Аревшатын-ի կատարած ռուսերեն թարգմանությունը՝ „Плач на взятие Константинополя”, որը հրատարակվել է երկու անգամ, նախ՝ „Византийский Временник” պարբերականի նոր շարքի VII հատորում՝ 1933 թ., և հետո՝ Հ. Անասյանի «Հայկական աղբյուրները Ռյուզանդիայի անկման մասին» գրքում՝ 1937 թ.:

Ի դեպ՝ նշենք, որ մոռացված է նաև Առաքել Բաղիշեցու հայտնի «Ողբ մայրաքաղաքին Ստամբուլ»:

²⁰ Հմմտ. Հ. Ս. Անասյան, հատ. Ա, էջ 808—11:

²¹ Նույն տեղում, էջ 82 և 86:

²² Ողբի այս թարգմանությունը, որ կրում է „Touchante élégie...” խորագիրը, գտնվում է Boré-ի այն հոդվածում, որն իր հերթին Սալմասլյանի մոտ նշանակված է մի ուրիշ տեղ այսպես՝ Boré E., „Élégie sur la prise de Constantinople, poème inédit...” (282), բայց ոչնչից չի երևում, որ այստեղ հրատարակված է Աբրահամ Անկյուրացու «Ողբ»-ը:

պոլու» երկի ֆրանսերեն թարգմանությունը՝ „Lamentation sur la prise de Constantinople”, որ հրատարակել է Ա. Չոպանյանը իր „La Roseate d'Arménie-ի III հատորում՝ 1929 թ., ինչպես և С. Аревшатын-ի ռուսերեն թարգմանությունը՝ „Плач о столице Стамболе”, որը երկու անգամ տպագրվել է Աբրահամ Անկյուրացու Ողբի հետ միասին:

Հայրախոսական դրականության մասնադեպ J. Nirschl-ի հայտնի „Lehrbuch der Patrologie und Patristik” ժողովածուի III հատորում, որը լույս է տեսել Mainz-ում, 1883 թ., հայադեպ P. Vetter-ը ռուսումնասիրություններ է հրատարակել Մեսրոպ Մաշտոցի, Կորյունի, Եղնիկի, Մովսես Խորենացու և Եղիշեի մասին: «Հայաստանյան մատենագիտության» հեղինակը սխալմամբ մեր հայադեպին է վերագրում Nirschl-ի ժողովածուն և նշում՝ Vetter P., „Lehrbuch...” (171), և հիշյալ III հատորի տարեթիվն էլ նշում է սխալ՝ 1885:

Սխալմամբ Teza E. անվան տակ է դրված՝ „Un viaggiatore armeno...” (401). Սա XVII դ. ուղևոր Ավետիք Տիգրանակերտցու ուղեգրությունն է, իտալերեն թարգմանությամբ. իսկ Teza-ն պարզապես նրա թարգմանիչն է:

Սխալ է նաև Simeon le Métaphraste անվան տակ դնել՝ „Vita e miracoli di S. Gregorio, arcivescovo e primate d'Armenia...” (400), որի հեղինակն է Gravina D. իսկ Սիմեոն Մետափրաստեսը նրա աղբյուրներից մեկն է²³:

Սխալ և անիմաստ վերնագրով է Avedichian G., „Sulle correzioni fatte ai libri...” (138), որը պիտի լինի „Dissertazione sulle correzioni...”. Mansi (պետք է լինի՝ Mansi J. D.) անվան տակ նշանակված սխալաշատ խորագիրը՝ „Sanctissimorum conciliorum nova et amplissima collecta” (156) պետք է լինի „Sacrorum conciliorum nova et amplissima collectio”. Ծույց է տրվում այս հրատարակության XXV հատորը՝ որպես հրատարակված ի „Florence et Venise, 1759—1798”, որ սխալ է: Բայց, անկախ այս սխալից, կարելի էր նշանակել նաև այս հատորի նոր հրատարակությունը ի „Graz, 1961”:

Հիմնովին վերախմբագրված խորագրով է՝ Bonnet G., „Quelques discours et lettres

²³ Հմմտ. Հ. Ս. Անասյան, հատ. Ա, էջ 957, § 33:

des princes orientaux (Cogeamorad) adressés à Louis le Grand sur l'état et les affaires de l'Empire des Turcs...» (59), որ պիտի լինի *„Quelques discours et lettres adressés à Louis le Grand, Roy de France, sur l'état et les affaires de l'Empire des Turcs; publiés par le Steur Georges Bonnet. Paris, chez Claude Barbin, 1683“*.

Բուխարեստում լույս տեսնող *„Studia et Acta Orientalia“* պարբերականի հրատարակության վայրը ցույց է տրված *„Buenos Aires“*, տես Kolandjian S. անվան տակ (381). Van den Oudenrijn M. A., *„Linguae halkanae scriptores“* (237) երկի հրատարակությանը ցույց է տրված *„Vienne, Mekhitaristes, 1959“*, տեղեկություններ, որոնք բոլորն էլ սխալ են. պիտի լինի՝ *„Bernae, A. Francke, 1960“*.

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ի գերմաներեն հրատարակությունը՝ *„Des Stephanos von Taron Armenische Geschichte. Aus dem Altarm. übersetzt von Helmr. Gelzer und Aug. Burckhardt“*, Leipzig, 1907, հնարավոր չէ գտնել հատորի անվանացուցակում, որովհետև գիրքը նշված է ֆրանսերեն ուղղադրությամբ *Açoghig de Taron* անվան տակ (50), բոլորովին անհետ անելով Stephanos von Taron անունը: Հնարավոր չէ գտնել նույնիսկ Մակլերի տված ֆրանսերեն հրատարակությունը՝ *„Histoire universelle par Étienne Asotik de Taron, traduite de l'arménien et annotée par Frédéric Macler. Deuxième partie, livre III“* Paris, 1917, որովհետև սա էլ է գրված նույն *Açoghig* անվան տակ (50)՝ գեն շարտելով դրքի ճակատին երևացող Étienne Asotik de Taron անունը: Այս *Açoghig* անունը գալիս է Դյուլորիկի ֆրանսերեն թարգմանությունից՝ *„Histoire universelle par Étienne Açoghig de Daron, traduite de l'arménien et annotée par E. Dulaurier. Ire partie“*, Paris, 1883. Բայց այս վերջին գիրքն էլ, նախորդների նման, կարելի է համարել անգտանելի, որովհետև մեր օրերում ոչ ոք էլ, — նույնիսկ արևմտահայը, նույնիսկ ֆրանսիացին, — Ասողիկ անունը չի որոնի չով գրված ձևի տակ: Պետք էր գրել՝ Étienne de Taron.

Էջերի սղության պատճառով չենք անդրադառնում լեզվական բազմաթիվ վրիպումների, ինչպես, օրինակ, էջ 159 տող 28՝ *„cum annotazioni de P.“* (փխ. *„con annotazioni dal P.“*). Կան նույնիսկ ֆրանսերենի վրիպումներ, որոնցից միայն էջ 298 տող 22—26 կարելի է նշել երեք հատ՝ „George“ (փխ. „Georges“),

„de SS.“ (փխ. „des SS.“), „le Stratelati“ (փխ. „le Stratélate“). Չենք անդրադառնում նաև մանր թվադրոշ, բայց ըստ էության խիստ կարևոր, բանասիրական մի քանի հարցերի, որոնցից հիշատակենք միայն հայ մատենագիրների անուն-մականունները ներկայացնելու պարագան:

Հայկական այն անձնանունները, որոնք ընդհանուր ծագում ունեն ֆրանսիականների հետ, Սալմասլյանը տալիս է ֆրանսերեն լեզվով (Հովհաննես — Jean, Գրիգոր — Grégoire), մի սկզբունք, որն ընդունված է բանասիրության մեջ առհասարակ բոլոր լեզուների համար: Այստեղ Սալմասլյանը տատանում չունի և ճիշտ ուղու վրա է: Բայց նա տարրերովում է մականունների խնդրում: Մի կողմից հայկական մականունները նա թարգմանում է՝ հենվելով հայերենի համար ընդունված գիտական տառադարձության և այժմյան արևելահայ արտասանության վրա (Կոլբացի — de Kolb, Տարոնեցի — de Taron): Սա և ճիշտ ուղի է և համապատասխանում է դասական բանասիրության մեջ ընդունված կանոններին, որոնք պահանջում են օտար անունները որդեգրել տվյալ լեզվին ընտանի ձևերի տակ: Բայց մյուս կողմից մականունները նա թարգմանում է նաև՝ հենվելով այժմյան արևմտահայ արտասանության վրա և կամայական ուղղագրությամբ (Լամբրոնացի — de Lampron, Տաշրացի — de Daschir). Սա արդեն գիտական չէ: Դարձյալ՝ մականունները նա տալիս է հայկական ձևով, արևելահայ արտասանությամբ, սակայն կամայական ուղղագրությամբ (Կաղանկատացի — Kaghankatoatsi, Երզնկացի — Erznkatzi). Սա ևս գիտական չէ: Դարձյալ՝ մականունները նա տալիս է հայկական ձևով, արևմտահայ արտասանությամբ և կամայական ուղղագրությամբ (Կլայեցի — Glajetzi, Գրիգոր Տղայի մականունը՝ Dgha). Սա նույնպես գիտական չէ:

Կան ուրիշ այլազանություններ ևս: Ձևերի այսպիսի մեծ հարստության կարիք չունեն, անշուշտ, հայ լեզուն՝ օտարներին ներկայանալու համար: Գիտությունը պահանջում է հետևողական միակերպություն, պարզություն և ճշգրտություն:

Հնդհասում ենք մեր գիտողությունները որոնց նպատակն է ոչ թե նսեմացնել Ա. Սալմասլյանի «Հայաստանյան մատենագիտության» այն արժանիքները, որոնց մասին խոսեցինք վերևում, այլ քննական ուղի ցույց տալ, որպեսզի նրա պարունակած թանկագին նյութերը զտվեն որոմներից և կարողանան արդյունավետ կերպով օգտագործվել հոգուտ հայագիտության: Կրկենք մի անգամ ևս, որ այս հրատարակու-

թյունը մեզ մատչելի է դարձնում մինչև այժմ
 անմատչելի և անծանոթ մնացած բազմաճազար
 նյութն, որոնց մեկտեղումն ու մատուցումը
 Սալմասյանի կողմից մեծադույն օժանդակու-
 թյունն է. ներկա պայմաններում, հայագիտու-
 թյան բնագավառում տարվող աշխատանքնե-

րին թե՛ մեղ մոտ, և թե՛ արտասահմանում: Սալ-
 մասյանն արել է այն, ինչ որ իրեն հնարավոր
 է եղել անել, և այդ բանի համար նա շնորհա-
 կալության ու երախտիքի է արժանի:

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ